ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

ՆԱՀԱՊԵՏԸ՝ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

(Ծննդեան 200-ամեակի առթիւ)

Ղեւոնդ Ալիշանը 90-ականների մեր սերունդի համար ամենահմայիչ անունն էր. նրա՝ Նահապետի սքանչելի բանաստեղծութիւններն ու երգերը՝ «Պլպուլն Աւարայրի», «Հայոց աշխարհի՛կ, գարունդ է եկել...», «Բա՛մ փորոտան», մենք անգիր գիտէինք, մեր դասագրքերի զարդն էին նրանք, ոգեւորուած արտասանում ու երգում էինք հանդէսներում։

Նրա ամբողջ կեանքը ճգնութեան խնկարան եւ դպրութեան թանգարան է եղել։ Աւելի քան վաթսուն տարի տեւող իր գիտական գործունէութեան ընթացքում Ալիշանը, ըստ երեւոյթին, մի քանի հազար կտոր գիրք է կարդացել, Դ. Վարուժանի պատկերաւոր արտայայտութեամբ՝ «քամել է համայն երակը տիեզերքին»[1]։ Հանդէս է եկել հայկական մշակութային կեանքի ամենատարբեր ասպարէզներում՝ դրսեւորելով իրեն որպէս ականաւոր բանաստեղծ ու արձակագիր, որպէս Հայաստան աշխարհի հմուտ տեղագիր-պատմաբան ու աշխարհագրագէտ, որպէս հանրագիտակ մտածող, որի գիտական, պատմական, գրական, թարգմանական ժառանգութիւնն ապշեցնում է իր հրսկայական ծաւալներով։

Անառարկելի մեծութիւն էր Ալիշանը նոյնիսկ նրանց համար, ովքեր հախուռնաբար մերժում էին Մխիթարեանների գրական վաստակն ու գաղափարաբանութիւնը։ Նրանցից շատերն անգամ չեն երկմտել ամբողջ միաբանութիւնից առանձնացնելու լայնախոհ Նահապետին։ Առանձնակի ջերմութեամբ ու ակնածանքով են արտայայտուել նրա մասին հայ գրականութեան հեղինակաւոր դէմքեր՝ Մ. Նալբանդեանը, Ղ. Աղայեանը, Յ. Պարոնեանը, Րաֆֆին, Յովհ. Թումանեանը, Ա. Չօպանեանը, Դ. Վարուժանը, Աւ. Իսահակեանը, Ե. Չարենցը, ընդունել նրա՝ որպէս բանաստեղծի, հզօր տաղանդը։

Դեռեւս 1859 թ. Միքայէլ Նալբանդեանը «Յիշատակարանում» գրում էր, որ Ալիշանի հայրենասիրական երգերը «ջերմացուցել են շատ սրտեր Նահապետի անունի վերայ»։ Դրանից մի քանի տարի անց, Պետրոպաւլովեան բանտում Նալբանդեանը՝ նկատի ունենալով «Երգ Նահապետի» շարքը, Ալիշանին հռչակում էր հայ նոր պոեզիայի հիմնադիր եւ շեշտում, թէ «չափաբերական քերթուածոց մէջ արժանաւոր վարդապետը ախոյեան չունի»[2], տարիներ յետոյ Ղ. Աղայեանը նոյնպէս հաւաստում է, թէ «Հայր Ղեւոնդ Ալիշանը դարուս հայկական հանճարի ներկայացուցիչն է։ Իբրեւ բանաստեղծ բոլոր բանաստեղծների նահապետը»[3], դրանից էլ մօտ քառասուն տարի անց, Ալիշանի մահուան առթիւ Արշակ Չօպանեանը ուղղակի յայտարարեց. «Զինքը համարինք հայոց մեծագոյն բանաստեղծը, որովհետեւ որքան ալ Աբովեան, Պէշիկթաշլեան, Դուրեան կը գերազանցեն Ալիշանը գրական այս կամ այն սեռին մէջ, ուր իրենք մասնաւոր ուժ մը ցոյց կու տան, Ալիշան զանոնք ամէնքն ալ կը գերազանցէ իր տաղանդին անհուն բազմազանութեամբը, լեզուին հարստութեամբն ու ճարպկութեամբը, տաղաչափութեան անվերջ պեսպիսութեամբը»[4], իսկ Թումանեանը

---

[1] «**Էջմիածին**», ԻԷ տարի, Դեկտեմբեր, 1970-ԺԲ, էջ 20:

[2] **Նալբանդեան Մ.**, Հրապարակախօսական երկեր, Երեւան, 1979, էջ 206-207, 441:

[3] **Աղայեան Ղ.**, Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան, 1963, էջ 21:

[4] «**Անահիտ**», Փարիզ, 1902, № 4, էջ 75: Նոյնը տե՛ս **Չօպանեան Ա.**, Դէմքեր, Փարիզ, 1924, էջ 95:

պատկառանքի նոյն զգացումով իր իսկ Ալիշանի չափով սգում էր «հայոց Նահապետի» կորուստը.

Թէպէտեւ վաղուց հասել էր աշուն,
Յամքած տերեւակն սպասել հովուն,
Թէ երբ ի լերաց ծոցում փչէ խոր,
Ձրգէ անկսկիծ ի մահուն սեւ ձոր,
Այլ ես շանթահար ապշիմ վշտակոծ,
Թէ ինչպէս ընկաւ Նահապետն հայոց...[5]

*Ալիշան-բանաստեղծի գրական-պատմական դէրը գնահատելով՝ գրականագէտ Ս. Սարինեանը իրաւացիօրէն գրում է. «Ե՛ւ որպէս ստեղծագործող, ե՛ւ որպէս հիմնադիր մեր նորագոյն բանաստեղծութեան համար նա (իմա.՝ Ալիշանը - **Ն.Ա.Ա.**) նոյն դերը կատարեց, ինչ Աբովեանը «Վերք Հայաստանի» հայ վէպի զարգացման գործում։ Ալիշանի բանաստեղծական աշխարհը իր ուրոյն երանգները տուեց հայ դասական պոեզիային։ Բնութեան ընկալման փիլիսոփայական խորհումների, հայրենասիրական պաթոսի շռայլ հարստութիւնը, բանաստեղծական պատկերի լիութիւնն ու երեւակայութեան թռիչքը ոգեշնչել են ոչ միայն Պէշիկթաշլեանին ու Դուրեանին, Պատկանեանին ու Շահազիզին, այլեւ թելեր են ձգել մինչեւ Թումանեանի ու Իսահակեանի, Վարուժանի ու Սիամանթոյի պոետական մտապատկերները։ Ալիշանի պոեզիան եւ աւարտ է, եւ սկիզբ*[6]*։*

Հայր Ալիշանի մասին գերադրական գնահատականներ շատ կարելի է բերել, բայց բաւարարուենք այսքանով։

Աւազանի անունով Քերովբէ Ալիշանը ծնուել է 1820 թուականի Յուլիսի 18-ին Կ. Պոլսում, դրամագէտ-հնահաւաք Պետրոս Մարգարի Ալիշանի ընտանիքում։ Տասներկու տարեկան հասակում, 1832 թուականին, հայրը նրան ուղարկում է Վենետիկի Ս. Ղազար վանքի դպրոցը («Ընծայարան»), ուր հինգ տարի ուսանելուց յետոյ, փոխադրւում է տեղի «Բարձրագոյն կրթարանը»։ Այստեղ էլ Ալիշանը սկսում է գրական իր առաջին փորձերը[7]*։ 1838 թ. Յունուարի 28-ին կրօնական մեծ հանդիսաւորութեամբ կատարում է իր ուխտադրութիւնը, որով դառնում է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ։*

1840 թ. Յունիսի 7-ին ձեռնադրւում է կուսակրօն հոգեւորական եւ «Աւարայրի արծուի»՝ Ղեւոնդ Երէցի անունով վերակոչւում է Ղեւոնդ, որին ջանացել էր նմանուել ոչ միայն անուամբ այլեւ սրտով ու հոգով։ Ձեռնադրութիւնից յետոյ, 1841 թ.-ին, դեռեւս 21 տարեկան երիտասարդ հասակում նշանակւում է ուսուցիչ Վենետիկի Ռափայէլեան վարժարանում։ Այնուհետեւ, 1843 թուականից սկսած, նա, մանկավարժական գործունէութեանը զուգընթաց, երբ հիմնադրում է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան պաշտօնական ամսագիր «Բազմավէպ»-ը՝ աշխատակցում, իսկ 1849-1852 թուականներին նաեւ խմբագրում է այդ հանդէսը։

1848 թ.-ին նշանակւում է Ռափայէլեան վարժարանի տեսուչ։ 1850-1853 թուականներին զանազան առիթներով լինում է Հռոմում, Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Վիեննայում, ուր ուսումնասիրում է հայկական գրչագիր մատեանները, հոգեւոր մշակութային յուշարձանները, նիւթեր է հաւաքում հայագիտական իր ուսումնասիրութիւնների համար։ Այդ ընթացքում բնագրից թարգմանում է Բայրընի «Ձայլդ Հարոլդ»

[5] **Սարինեան Ս.**, Հայկական ռոմանթիզմ, Երեւան, 1966, էջ 212:

[6] Նոյն տեղում, էջ 213:

[7] Հայ նոր գրականութեան պատմութիւն, հ. 1, Երեւան, 1962, էջ 478-479:

պոեմի չորրորդ երգը եւ գրում է մի շարք բանաստեղծութիւններ[8]։

1858-1861 թուականներին Ալիշանը վարում է Փարիզի Մուրատեան վարժարանի տեսչի պաշտօնը։ Այնուհետեւ, 1861 թ. Նոյեմբերին վերադառնում է Վենետիկ եւ 1866 թ.-ին վերստին ստանձնում է Ռափայէլեան վարժարանի տեսչի պաշտօնը՝ մինչեւ 1872 թ.[9]։

1876 թ.-ին վախճանւում է Մխիթարեան միաբանութեան աբբահայր Գէորգ Հուրմուզեանը եւ, ինչպէս վկայում է ժամանակակիցներից Մ. Շովրեանը, «Բոլորի աչքը հառւում է դէպի Ալիշանը, սակայն համեստագոյն Ալիշանը»,- որ խորշում էր պաշտօններից, հրաժարւում է աբբահայրութիւնից։ Իսկ երբ Միաբանութեան անդամները սկսում են պնդել, պատմում են, որ ծերունին հանել է իր գրիչը եւ բարկացած ասել. «Եթէ դուք իսպառ կամիք կոտրել այս գրիչը, ընտրեցէք զիս»[10]։ Միաբանութեան անդամները տեղի են տալիս՝ բաւարարուելով նրան աթոռակալի պաշտօնը պարտադրելով։ Այդ քայլով Ալիշանը կարողացաւ փրկել իր վերջին քսանհինգ տարիները, որ անմնացորդ նուիրեց հայ գրականութեանն ու պատմութեանը։

Ղեւոնդ Ալիշանը ապրեց՝ ութսուներկու տարի. «Սիմէոն ծերունիին պէս պիտի ապրիմ ու պիտի սպասեմ...»[11],- ասել է նա Միաբանութեան քահանաներից մէկին։ Եւ սպասեց նա, սպասեց երկար, սակայն, ի տարբերութիւն Սիմէոն ծերունու, որ տեսաւ Իսրայէլի փրկչին, Հայ Մեսիան չեկաւ. «Երգեց, աշխատեցաւ եւ այն Մեսիային չտեսաւ, ոգեառ ոգին ալ սպասեց՝ բայց չխաբուեցաւ...»[12]։

Ալիշանը մահացել է 1901 թ. Նոյեմբերի 22-ին։ Մի պահ, ասես, մոռացուեց նրա եկեղեցական պատկանելիութիւնը։ Մահախօսական յօդուածներ հրատարակեցին հայկական բոլոր լրագրերն ու ամսագրերը. «... Հ. Ալիշանը ամբողջ ազգին է պատկանում, որովհետեւ նրան սիրելու համար չպէտք է լինել լուսաւորչական, կաթոլիկ կամ բողոքական, այլ միայն հայ»[13],- գրում էր «Մշակ»-ը եւ պահանջում, որ Ալիշանի մահուան կապակցութեամբ հոգեհանգիստ տրուի հայկական բոլոր եկեղեցիներում։ Ի հարկէ հայկական բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ չտրուեց։ Յովհ. Թումանեանի եւ առաջադէմ միւս ազգային գործիչների միջամտութեամբ հոգեհանգիստ կատարուեց միայն Թիֆլիսի կաթողիկէ եկեղեցում, բայց այդ արարողութեանը ներկայ էին ազգային բոլոր երեւելիները առանց կրօնական խտրականութեան, այդ թւում նաեւ Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդը, ինչը այն ժամանակների համար գրեթէ չլսուած բան էր[14]...

Ղեւոնդ Ալիշանն իր խցում ներշնչուած Մովսէս Խորենացու եւ Անանիա Շիրակացու ներկայութեամբ, անխոնջ համբերանքով եւ աւիւնով պրպտել է ողջ մատենագրութիւնը՝ պատմական եւ աշխարհագրական, արդի հայ գրականութիւնն ու մամուլը, հաւաքել է անթիւ տեղեկութիւններ Հայաստանի ամէն մի վայրի մասին՝ հին եւ նոր[15] ու ստեղծել ստուարածաւալ բազմաթիւ աշխատութիւններ, ինչպէս՝ «Տեղագիր հայոց մեծաց», «Շնորհալի եւ պարագայ իւր», «Շիրակ», «Սիսուան», «Այրարատ», «Սիսական», «Հայբուսակ», «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց», «Հայ-Վենետ», «Հայապատում» եւ այլ փոքր ու մեծ, շատ հետազօտութիւններ, որոնք փաստական հսկայական նիւթ են պարունակում հայ ժողովրդի պատմական անցեալի գրեթէ բոլոր շրջան-

---

[8] Տե՛ս նոյն տեղում, էջ 479-480։

[9] Տե՛ս «**Էջմիածին**», Իէ տարի, Դեկտեմբեր, 1970-ԺԲ, էջ 23։

[10] **Շովրեան Մ.**, Հ. Ալիշանի մահուան առթիւ, «**Գեղունի**», 1902, № 3, էջ 30։

[11] **Երեմեան Ս.**, Կենսագրութիւն Հ. Ալիշանի, Վենետիկ, 1902, էջ 194։

[12] Նոյն տեղում։

[13] «**Մշակ**», 1901, № 252։

[14] **Բանբեր Երեւանի համալսարանի**, 3(105), Երեւան, 2001, էջ 206։

[15] **Իսահակեան Ա.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5, Երեւան, 1977, էջ 10։

ների եւ բնագաւառների վերաբերեալ[16]։

Զափածոյ գրական ստեղծագործությունները գրեթէ ամբողջությամբ ամփոփուած են «Նուագք» խորագրով լոյս տեսած հինգ հատորների մէջ, որոնք տպագրուել են Վենետիկում 1857-1858 թուականներին։ Բոլոր հինգ հատորների («Մանկունի», «Մաղթունի» եւ «Բնունի», «Հայրունի», «Տէրունի», «Տխրունի»), հիմնական բովանդակությունը ազնուի, բարու, գեղեցկի, բարոյականի ու վեհի, հայրենասիրության, սխրանքի գովերգումն է։ Դժբախտաբար գրաբար գրուած լինելով հինգ հատորները չմարսուեցին։ Սակայն այս շարքում բացառիկ է երրորդ՝ «Հայրունի» վերտառությամբ հատորը, ուր գրաբար գրուած պատմա-հայրենասիրական բովանդակությամբ ստեղծագործությունների հետ մէկտեղ գտնում ենք աշխարհաբարով գրուած 11 բանաստեղծություններ («Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Աւարայրի», «Ողբամ զքեզ, Հայո՛ց աշխարհ», «Հրազդան», «Մասիսու սարերն», «Շուշանն Շաւարշանայ», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ», «Լուսնկայն գերեզմանաց հայոց», «Հայ հայրենիք», «Հայ հանճար», «Վերջին երգ վիրաւոր բամբռահարին»), որոնք կրում էին ոչ թէ Ալիշանի սովորական ստորագրություններից որեւէ մէկը, այլ խորհրդաւոր եւ խորհրդանշական, ինքնին հնութեան եւ ծերության շունչ հաղորդող «Նահապետ» անունը։ Հէնց այս, աշխարհաբարով գրուած 11 բանաստեղծություններով էլ առաւելապէս յայտնի է բանաստեղծ Ալիշանը։

Ինչո՞ւ է Ալիշանը իր բանաստեղծական գրչի ամէնից տաղանդաւոր եւ նշանակալից էջերը վերագրել իրականում գոյություն չունեցած «Նահապետ» երգչին։ Այս հարցին գրականագիտության մէջ տարբեր պատասխաններ են տրուել, բայց հիմնականը համարուել է այն, որ դեռ երիտասարդ հասակում Ալիշանը ցանկացել է հանդէս գալ ծերունի, կենսափորձով հարուստ բանաստեղծի դերում, որը նրան իրաւունք կը տար հայրենասիրության դասեր կարդալու նոր սերնդին։ Դեռեւս Մ. Նալպանտեանը, Ալիշանին անձամբ հանդիպելուց եւ ճանաչելուց յետոյ գրում էր, թէ «շատ երիտասարդ կը կացուցանէ մեզ ծերունի Նահապետը..., եթէ իւր այսուհետեւ երգելիքը երգէ աւելի հասկնալի (հասարակ ժողովրդի համար) լեզուով»[17]։ Այդ ժամանակ՝ 1859 թ.-ին Ալիշանը քառասուն տարեկան էլ չկար։

Արսէն Տէրտէրեանը շատ յստակ եւ որոշակի բացատրություն է տուել գրելով. «Նահապետը դեռ քառասուն տարին չէր բոլորել, երբ գրում էր իր քերթուածները. բայց նա իրեն «ծեր» է համարում, ծեր ո՛չ եռանդի, աշխոյժի եւ գործունէության կրակի իմաստով, այլ իր փորձառությամբ, աշխարհածանօթությամբ եւ գիտությամբ, որոնցով նա ուզում էր մենտոր հանդիսանար նոր սերնդի, երիտասարդության, հայկակների համար»[18]։

Հիանալի իմանալով նահապետ բառի իմաստները՝ Ղեւոնդ Ալիշանը «Հայոց աշխարհիկ» բանաստեղծության մէջ շեշտում է Ստ. Մալխասեանցի «Հայերէնի բացատրական բառարանի» երրորդ հատորում բացատրուած նահապետ բառի վերջին՝ «ծերունազարդ մարդ» արտայայտությունը։ Բանաստեղծությունն աւարտում է հետեւեալ տողերով.

Ծեր Նահապետիդ՝ տո՛ւր կակուղ հողիկ,
Որ զքեզ պինդ սիրեց, Հայո՛ց աշխարհիկ[19]։

---

[16] Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Երեւան, 1962, էջ 480։

[17] **Բանբեր Երեւանի համալսարանի**, 2(47), Երեւան, 1982, էջ 26-27։ Նաեւ **Նալպանտեան Մ.**, Հրապարակախօսական երկեր, Երեւան, 1979, էջ 207։

[18] **Տէրտէրեան Ա.**, Հայ կլասիկներ, Երեւան, 1944, էջ 75։

[19] **Ալիշանեան Մ. Ղ.**, Նուագք, Վենետիկ, 1867, էջ 274։ (Այսուհետեւ սոյն աղբիւրից մէջբերուող հատուածների էջերը կը տրուեն տեքստում՝ փակագծերի մէջ)։

Այս տողերն Ալիշանը գրել է, երբ ընդամէնը քսանեօթ տարեկան էր ու երիտասարդութեան ծաղկուն հասակում իրեն կոչել է ծեր։ Նա քաջ գիտէր, որ անտիկ աշխարհում եւ հայ աւանդական սովորութեամբ ծերերը խրատում էին մանուկներին՝ կեանքի ուղին ճիշդ ընտրելու համար, այդ իսկ պատճառով էլ ընտրել էր նման գրական անուն, որով էլ փորձում էր շեփոր հնչեցնել, արթնացնել հային՝ ազգային արժանապատուութիւն ներարկել նրան, ինքնիշխան լինելու գերագոյն հաճոյքը զգալ տալ նրան՝ կարծելով կը զարթնի հայը հայի մէջ... Յորդորում էր. «Ճանաչել եւ պահել անվթար զսեփական շնորհս ազգիս, զլեզուս նորա, զպատմութիւն նորա, զսովորութիւն եւ զախորժակս նորա անվնաս, զհարազատ դպրութիւն նորա եւ զփառս անուան նորա։ Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»[20]։

Այս շարքի բանաստեղծութիւնների հիմնական առանձնայատկութիւնը լաւատեսութիւնն է հայոց ապագայի նկատմամբ, որ բացառիկ ռոմանթիզմով արտայայտուած է «Մասիսու սարերն» բանաստեղծխութեան մէջ։ Ի՜նչ մեծ ազգազգացողութիւն պէտք է ունենայ մարդ, որ հայրենիքից հեռու, կղզում «պարփակուած», Արարատը համարի հայոց վերածննդի պատուանդանը եւ մանուկ սերնդին ներշնչի ազգային արժանապատուութեան զգացում, ինքնավստահութիւն, լաւատեսութիւն.

«Դալա՛ր մանկտիք, ձեր տակն է Արարատ,
Պի՛նդ կացէք...»։ (էջ 289)

Ալիշանի սիրտը մշտապէս լցուած էր Աստծու եւ ազգի հանդէպ ունեցած սիրոյ մեծ զգացումներով։ Նախահայրերի՝ իրեն թողած բոլոր հաւատալիքները, զրոյցները, Աստծոյ, աշխարհի, կեանքի եւ հայոց պատմութեան մասին պապենական աւանդութիւնների տուած գաղափարները անվիճելի ու միակ իրականութիւնն էին նրա համար։ Վերջնական ճշմարտութիւններ էին նրա աչքին հայ պատմագիրների ու քրոնիկագիրների բոլոր աշխատութիւնները, գերագոյն գրքերը՝ Աստուածաշունչն ու Խորենացին՝ լուսաբանող, պատկերազարդող, երգաբանող։ Ըստ նրա, այդ երկու գրքերի ամէն մի էջը սրբազան, ամէն մի բառը յաւիտենական ու ճիշդ էր։ Ա. Զօպանեանի վկայութեամբ «կը տառապէր», երբ տեսնում էր եւրոպացի կամ հայ քննադատները քայքայում էին Խորենացու կառուցած շէնքը[21]։

Հայաստանը նրա համար աշխարհի կենտրոնն էր, օրհնեալ «բնագաւառն», ուր Աստուած բնակեցրեց առաջին մարդուն, Հայկի նախահօրը՝ Ադամին, որ արդէն Հայ էր, եւ խօսում էր մի լեզու, որը հայերէնի նախահայրն էր.

Մեր տէրն ի յերկնուց ծայրէն երբ իջաւ,
Երկրիս հիման քարն յԱրարատ դրրաւ.
... Ի Հայոց հողէն կազմեցաւ Ադամ,
Զօղն Հայոց Եւան ծրծեց քաղցրահամ.
... Այս մեր սարերու ծերուկ արձագանք
Ասպուծոյ ձայնին տրուին պատասխանք։ (էջ 270)

Աւելին՝ վստահ էր, որ հէնց Հայաստանում է եղել աստուածային դրախտը, Արարատի վրայ է կանգ առել Նոյի տապանը, ու, որ հայերը Նոյի հարազատ զաւակներն են.

Երբ գոռաց երկինքն ու գետին սարսեց
Ամպերն ի ծով, ծովն ի յամպեր վազեց,

---

[20] «**Բազմավէպ**», 1848, № 12, էջ 181։

[21] Տե՛ս **Զօպանեան Ա.**, Դէմքեր, Փարիզ, 1924, էջ 85-86։

Այն սարին ծայրէն Նոյ մտաւ ի տապան
Զրագունդ երկրիս շուրջն եկաւ մանուման[22],
Իջաւ բազմեցաւ ի բարձրըն Մասիս
Զաղու աղաւնին ղրկեց աւետիս.
Երկիրս էր դարտակ անապատ ահեղ,
Լուկ ի Հայաստան կար մարդկութեան տեղ: (էջ 271)

Յենուելով Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» վրայ՝ Ալիշանը իր գրուածքներում յիշատակում է Հայկին, որ «փառք որդւոցն տուաւ ազատութիւն աշխարհի», անպարտելի թագաւորներ Արամին, Տիգրանին, որ «հսկայից յաղթեցին», «լեռնանման կտրիճներն ի ձորն Հայոց թափեցին», ինչպէս նաեւ «մեծն հսկայից եւ թագաւորաց» Տրդատին[23]*: Նշում է նաեւ, որ հայոց Աբգար թագաւորը նամակագրութեան մէջ է եղել Յիսուս Քրիստոսի հետ, որ Հայաստանում են գտնւում Յիսուսի կողաբաց գեղարդը եւ քրիստոնէական եկեղեցու հետ կապուած այլ նշխարներ ու մասունքներ*[24]*: Հայաստանում կառուցուել են բազմաթիւ տաճարներ ու եկեղեցիներ, մեր երկրի երիտասարդները կրթուել են հին աշխարհի նշանաւոր կրթարաններում, թարգմանել այլ լեզուներից բազում գրքեր, շարադրել են նաեւ մեծաքանակ մատեաններ.*

Շատ գրքունք գրեր մեր հարքն ու մագղաթ
Զէր ցորեն դիզել, քանց բարձր Արարատ: (էջ 273)

Հայաստանի պատմական ընթացքը խաթարել են չար թշնամիները, որոնք քանդել են մեր եկեղեցիները, վանքերը, գրատները, պալատները, սրածել ու գերել հայերին: Այս արհաւիրքները, ըստ Նահապետի, չեն կրկնուի, եթէ հայերն ամուր կապուեն իրենց հայրենիքին, յիշեն Արարատ լեռան անսասանութիւնը, միասնական լինեն ու թէեւ ուշացած՝ Հայոց աշխարհիկը վերստին կը տեսնի իր ազատ հայրենիքը: Սա, անշուշտ տպաւորիչ հայրենասիրական դաս է, որ հայ ժողովրդի նոր սերնդին ուսուցանում է Ղեւոնդ Ալիշանը[25]*:*

Ազգն ու հայրենիքը նրա համար մշտապէս եղել են բարձրագոյն արժէքներ: Դեռեւս 23-ամեայ Ալիշանը 1843 թ.-ին Ռափայէլեան վարժարանի շրջանաւարտների առաջ ունեցած իր ելոյթի մէջ ասում էր. «Ով որ անտարբեր է դէպ ի հայրենիքը, ան իրաւունք չունի ընկերութեան մէջ ապրիլ, դուրս պէտք է ելել յազգես ի բնաւ իսկ մարդկանէ, յանտառս յանապատս ի սառնամանիս դիցէ զբոյն իւր»[26]*:*

Իւրաքանչիւր ազգ իր երկրի, նրա բնութեան ու կլիմայի արդիւնքն է, եւ անկախ այն բանից, թէ ինչ խստաշունչ կլիմա եւ ինչ թշուառ ճակատագիր ունի այն, միշտ էլ սիրելի է իր ժողովրդի համար: Ինչպէս որ մեր ծնողներին սիրելի դարձնողը նրանց հարստութիւնը եւ փառքը կամ առողջութիւնն ու գիտութիւնը չեն, այդպէս էլ հայրենի բնութեան հարստութիւնն ու կլիման չեն կարող լինել հայրենիքի սիրոյ պատճառը:

---

[22] Մանուման – պտոյտ, ման գալ, շրջել: Տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերենէի բացատրական բառարան, հ. 1, Երեւան, 1944, էջ 255:

[23] Տե՛ս **Զօպանեան Ա.**, Դէմքեր, Փարիզ, 1924, էջ 87:

[24] Աբգարը Յիսուսին գրում է. «Լսել եմ քո մասին եւ այն բժշկութիւնների մասին, որ կատարւում են քո ձեռքով առանց դեղերի եւ արմատների, որովհետեւ, ինչպէս ասում են, դու կոյրերին տեսնել ես տալիս, կաղերին քայլեցնում ես, բորոտներին մաքրում ես, չար ոգիները եւ դեւերը հանում ես եւ առհասարակ երկարատեւ հիւանդութիւններով չարչարուողներին բժշկում ես, նաեւ մեռածներին կենդանացնում ես» (Տե՛ս **Խորենացի Մ.**, Հայոց Պատմութիւն, Երեւան, 1997, էջ 147-148):

[25] Յօդուածների ժողովածու նուիրուած Վենետիկի Ս. Ղազար կղզում Մխիթարեան միաբանութեան հաստատման 300-ամեայ յոբելեանին, Երեւան, 2017, էջ 110:

[26] «**Բազմավէպ**», 1843, էջ 181:

Ի՞նչ են ասում այն մարդուն, որը չի սիրում իր ծնողներին՝ պատճառ բերելով նրանց աղքատութիւնը կամ խեղճութիւնը. «մարդ չէ, գազան է կ՚ըսենք»։ Սակայն «ազգը չսիրելը, իր ծնողքը չսիրելէն վար չմնար», հետեւաբար, եթէ ծնողներին չսիրողին ասում են՝ մարդ չէ, գազան է, ապա «իր ազգը չսիրողը, իր ազգը չպատուողն ալ՝ չազգի, տմարդի բան մըն է»,- ասում է Ալիշանը։ Մենք սիրում ենք մեր ծնողներին, որովհետեւ նրանք կեանք են տուել մեզ, նոյն տրամաբանութեամբ էլ մենք պարտաւոր ենք սիրել մեր ազգը, որովհետեւ նա կեանք է տուել մեր ծնողներին. «Մեր ազգն է մեր հայրերուն հայրը. մեր ազգն է զմեզ մեզի տուողը»,- հետեւաբար՝ անիրաւ է նա, ով չի սիրում իր ազգը, եւ աւելի անիրաւ է «հայ մը, թէ որ ազգը հայ ըլլալուն համար չսիրէ»,- գրում է Ալիշանը։ Ուրեմն, եթէ «ծնողքը անիծողին լեզուն կը կտրեն, զազգը անիծողին լեզուն արմտէն խլելու է, վասնզի իր ծնողացը ծնողքն ալ կանիծէ»[27]։

Սակայն ինչպէս հայրենասիրութեան, նոյնպէս եւ ազգասիրութեան մէջ անհրաժեշտ է լինել իրատես։ Ճշմարիտ ազգասիրութիւնը ոչ թէ ազգի թերութիւնները ծածկելն է, ազգի պակասութիւններից հրաժարուելը, այլ այդ թերութիւններն ու պակասութիւնները ժամանակին յայտնաբերելը եւ բուժման միջոցներ որոնելը։ Բայց դա չի նշանակում նաեւ «ազգը միշտ վար զարնել, անդադար պակասութիւններն յիշել, ողբալ, արհամարհել», որովհետեւ դրանով մենք կոտրում ենք մարդու սիրտը, թուլացնում, յուսահատեցնում, կատաղեցնում ենք նրան։ Հետեւաբար՝ շատ են սխալւում նրանք, ովքեր «որ ազգը կ՚ուզեն շարժել յանդիմանող, կծու ձայնով, կը կարծեն, թէ փոսը ընկած էշ մը կը վերցնեն հրելով, մշտելով, կանչուռտելով, հայհոյելով, այս բանս շարժելու տեղ աւելի կը ջլատէ, կը կոտրէ ուժը, արդէն հիւանդ մարմինը աւելի կը վատուժցնէ»,- ասում է Ալիշանը։

Վնասակար է, ոչ միայն «ազգը միշտ վար զարնելը»,- պակասութիւնները յիշելը, խարանելը, այլեւ ազգը «միշտ գովելն ու գովելի ցուցնելը»,- քանի որ, եթէ առաջին դէպքում աւելի կը ջլատուի, կը կոտրուի ազգը, ապա երկրորդ դէպքում «սիրտը կ՚ուռցնեն, միտքը կը կուրացնեն, սնապարծ ազգասէր մը կ՚ընեն, օդու մէջ պարող մը, որ հաստատութիւն չունի»,- գրում է նա։ Անկասկած, ազգն արթնացնելու եւ բարձրացնելու համար միանգամայն կարեւոր է սիրտ տալը, ոգեւորելը, «յուսոյ եւ գովութեան» խօսքեր ասելը, բայց նա երբեք էլ կողմնակիցը չէ չափազանցութեան, դատարկ գովեստների, փառաբանութեան։ Ճշմարտութեան շրջանակներից չի կարելի դուրս գալ նոյնիսկ հայրենասիրութեան ու ազգասիրութեան հարցերում[28]։

Հայրենասիրական երկերի շարքում ուշագրաւ է յատկապէս «Պլպուլն Աւարայրի» պոեմը, որն իր պաթոսով հմայիչ ու խոր ազդեցութիւն է գործել բոլոր ժամանակներում եւ դարձել է հայ ժողովրդի սիրելի գործերից մէկը, ժամանակակիցները հեղինակին տուել են «Աւարայրի սոխակ» մականունը։

Պոեմը սկսւում է Աւարայրի դաշտի նկարագրութեամբ։ Սկզբից մինչեւ վերջ ներկայ է հեղինակը՝ որպէս նոր մի Եղիշէ, որ բորբոքում է անկախութեան հուրը։ Աւարայրի դաշտում իր խոհերի հետ շրջում է հայ երգի Նահապետը... Երեւակայութեան բարձունքում յայտնւում են Եղիշէն, Վարդանը սիգապանծ քաջերով... Բռնկւում է պատերազմը, արիւն է կտրում խաղաղաւէտ Տղմուտը, ամպերին են հասնում նետերի շառաչը, ձիերի դոփիւնը, վիրաւորների վայնասունը, բայց կանգնած է Վարդանը, նրա ղեկավարութեամբ առաջ են նետւում հայերը՝ նոր հայրենազոհութիւնների։ Ճակատամարտից յետոյ անծայր լռութիւն է, չկայ կենդանի որեւէ շունչ, բայց ահա մթութեան քօղի տակ երեւում է մէկի սրբացած, աստուածային կերպարանքը։ Եղիշէն է՝

---

[27] **Բանբեր Երեւանի համալսարանի**, 3(105), Երեւան, 2001, էջ 209:

[28] Նոյն տեղում, էջ 210-211:

Վարդանանց հերոսամարտի պատմիչն ու երգիչը, որին եւ նկատի է ունեցել հեղինակը իր պոեմին «Պլպուլն Աւարայրի» խորագիրը տալով[29]։

1848 թ.-ին, երբ հեղափոխութեան ալիքը ցնցեց Իտալիան՝ «աւստրիացիք, հեռացէ՛ք Վենետիկից, թո՛ղ կորչի նուաճողի լուծը, թո՛ղ կեցցէ մարտնչող ժողովուրդը, թո՛ղ ապրի անկախ Իտալիան...», ազատագրական պայքարի տրամադրութիւնների տակ Ալիշանը գրեց հռչակաւոր «Բա՛մ փորոտան»-ը՝ ոգեշնչելով մարտնչողներին. «հապ՝ օ՛ն յառա՛ջ»։ Ռոմանթիկ գրողը համոզուած էր, որ մի օր էլ ազատութեան ղողանջները իր հայրենիքում կը լսուեն, ուստի ստեղծեց ապագայի քայլերգը։ Այն դարերից եկող հայ ոգու կանչն էր որ հարազատ էր ե՛ւ վենետիկեան մարտնչողներին, ե՛ւ անկախութեան համար արիւն թափող միւս ազգերին. «Ի զէ՛ն ի վրէժ, օ՛ն անդր յառաջ»[30]։ Իր այս շունչով ու թռիչքով էր, որ Ալիշանը հայոց հաւատքի խորան բարձրացրեց եւ աստուածահաճոյ դարձրեց Հայաստանի ու հայկականութեան սէրն ու պաշտամունքը։ Նա առանց նիւթական աչքերով Հայաստանը տեսնելու, հոգով տեսաւ ու այցելեց Հայաստանի ամէն մի կէտը, սիրեց, ապրեց ամէն մի հողի կտորը, շնչաւորեց աւերակները, գգուեց, հիացաւ նրանցով, հաւատաց եւ հաւատացրեց՝

Մի՛ ուրանար զերկիրդ եւ զազգդ սիրուն,
Ծառն արմատով է ծառ՝ տունն հիմամբ է տուն[31]։

«Իր հատորների եւ մեր հոգիների մէջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը եւ պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց եւ իրական։ Հայաստանը ո՛չ ոք այնպէս չգիտէ, ինչպէս նա, ո՛չ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասէրը։ Իրականութիւնը նրա գրչի տակ երազ է դարձել եւ երազը՝ իրականութիւն»[32],- գրել է Աւ. Իսահակեանը։

Յիրաւի, Ալիշանը նորարար-բանաստեղծ է, խոշոր գիտնական, հայրենագիտութեան հիմնադիրն ու նրա մեծավաստակ մշակը, երիտասարդ սերնդի դաստիարակն ու ձեռնհաս խմբագիրը, մարդ որ ինչ-որ չափով իրենով լցրեց 19-րդ դարի ամբողջ հայ կեանքը, եւ իմաստաւորելով իր կեանքի ամէն մի պահը՝ յաւիտենականութիւն ապահովեց իր համար։ Նրա ժողովրդայնութեան հիմքը նրա անսահման սէրն էր հայրենիքի ու մարդու նկատմամբ։ Նա իր բոլոր գործերում շարունակ հաստատում է աստուածային պատուիրաններին թէ՛ գրչով, թէ՛ գործով հաւատարիմ լինելու գաղափարը։

Կանցնեն ժամանակներ, շատ գործեր կը խամրեն, սակայն Ալիշանի թողած ժառանգութիւնից շատ բան չի կորցնի իր արժէքը։ Եւ այս չէ՞ արդեօք մարդ արարածի իրական անմահութիւնը։

ԵՐՈՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

---

[29] Տե՛ս **Գրիգորեան Վ.**, 19-րդ դարի հայ գրականութեան պատմութիւն, Ս. էջմիածին, 2018, էջ 64։

[30] Տե՛ս նոյն տեղում, էջ 61։

[31] Տե՛ս http://www.aztagdaily.com/archives/416693 (15.11.2020)

[32] **Իսահակեան Աւ.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5, Երեւան, 1977, էջ 11։